ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզալյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Նիկոլայ Բաղդասարյանի, Սիմոն Բաբայանի, Լիպարիտ Սիմոնյանի և Մարտուն Փանոսյանի,

նկատի ունենալով Արա Զոհրաբյանի կողմից Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները 04.10.2013թ. ստանձնելու հանգամանքը,

քննության առնելով 2013թ. հոկտեմբերի 4-ից մինչև 25.12.2013թ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ Պալատի նախագահի ֆինանսական հաշվետվությունը,

ղեկավարվելով Պալատի կանոնադրության 17.3 կետի 18-րդ ենթակետի պահանջներով, միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- *Հաստատել Պալատի նախագահի ֆինանսական հաշվետվությունը (04.10.2013թ.-ից մինչև 25.12.2013թ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ)՝ համաձայն հավելվածի:*
- *Հետաձգել Պալատի ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ Պալատի նախագահի հաշվետվությունը (04.10.2013թ.-ից մինչև 25.12.2013թ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ) և քննարկել այն 2014թ. Պալատի ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվության հետ միասին:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

26 դեկտեմբեր 2013թ.
թիվ 33/4-Լ
ք. Երևան